ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/3562-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (Պ-955-04.11.2024,10.01.2025-ՊԻ-011/1) Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է հետևյալը.

1. Օրենքի նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներն առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-252-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայաստանի Հանրապետության օրհներգը պետք է կատարվի սույն օրենքի 1-5-րդ հավելվածներով հաստատված երաժշտական և տեքստի խմբագրությամբ՝ մշակույթի պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պաշտոնապես հրապարակված տարբերակին համապատասխան՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված կատարման տարբերակներից յուրաքանչյուրի համար առանձին:

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրհներգը՝ օրենքով նախատեսված որոշ դեպքերում, կարող է օգտագործվել նաև սույն օրենքի 2-րդ, 3-րդ և 5-րդ հավելվածներով հաստատված երաժշտական և տեքստի կարճ խմբագրությամբ՝ մշակույթի պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պաշտոնապես հրապարակված տարբերակին համապատասխան՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված կատարման տարբերակներից յուրաքանչյուրի համար առանձին:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Հայաստանի Հանրապետության օրհներգի տեքստը և երաժշտությունը

Հայաստանի Հանրապետության օրհներգը «Մեր հայրենիքն» է՝ սահմանված սույն օրենքի 1-5-րդ հավելվածներում (տեքստը՝ հիմնված Միքայել Նալբանդյանի խոսքերի վրա, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյան):»:

2. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք լրացնել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները, իսկ 6-րդ հոդվածի 3-րդ մասն առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր պաշտոնական ինտերնետային էջում հրապարակում է օրհներգի նոր պաշտոնական տարբերակը(ները):»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ